ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 3/8
հեռ.՝ (+374) 10 59 40 15
էլ.փոստ՝ tigran.dadunts@gov.am

№ _____
«11» նոյեմբերի 2026թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գալյան,

Սույն թվականի 2026 թվականի նոյեմբերի 1-5-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն) իրականացված գործուղման շրջանակում նոյեմբերի 2-3-ը մասնակցություն եմ ունեցել Համաշխարհային բանկի խմբի կենտրոնակայանում անցկացված «Իրավունք, արդարադատություն և զարգացում» 2026 թվականի համաժողովին (Law, Justice and Development Forum 2026), որը նվիրված էր իրավական բարեփոխումների միջոցով ներդրումների խթանմանը և զարգացման առաջնահերթությունների իրականացմանը:

Համաժողովին մասնակցել են տարբեր երկրների արդարադատության նախարարներ, գլխավոր դատախազներ, Համաշխարհային բանկի խմբի ղեկավարության և փորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ: Առաջին օրվա քննարկումները վերաբերում էին մասնավոր ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ իրավական և կարգավորիչ բարեփոխումներին, դրանց առաջնահերթությունների որոշման համար տվյալների և վերլուծությունների կիրառմանը: Երկրորդ օրը հիմնական ուշադրությունը դարձվել է բարեփոխումների գործնական իրականացմանը, միջգերատեսչական համագործակցությանը, ֆինանսավորման և տեխնիկական աջակցության գործիքներին, ինչպես նաև վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմներին:

Նոյեմբերի 3-ի քննարկման ընթացքում ներկայացվել է Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումների փորձը՝ մասնավորապես դատարանների

ծանրաբեռնվածության նվազեցման, արդարադատության ծառայությունների հասանելիության, թվայնացման, ինստիտուցիոնալ փոփոխությունների և բարեփոխումների համակարգման ուղղություններով: Ընդգծվել է, որ բարեփոխումների նպատակը ոչ թե պարզապես նոր համակարգերի ներդրումն է, այլ քաղաքացիների և տնտեսավարողների համար ավելի արագ, մատչելի ու կանխատեսելի ծառայությունների ապահովումը:

Որպես օրինակ ներկայացվել են փոքր գումարների բռնագանձման գործերով իրականացված փոփոխությունները: 2024 թվականին որոշակի դրամական պահանջների՝ մինչև շուրջ 5,000 ԱՄՆ դոլարին համարժեք չափով, քննությունը սովորական դատական վարույթից տեղափոխվել է նոտարական ընթացակարգերի և արբիտրաժի դաշտ՝ նախատեսելով նաև էլեկտրոնային գործիքների կիրառում և պահանջների վիճարկման հնարավորություններ: Արդյունքում 100 հազարից ավելի նման գործեր լուծվում են առանց սովորական դատական վարույթի: Միաժամանակ նշվել է, որ 2022-2025 թվականներին դատարաններում ստացված նոր քաղաքացիական գործերի թիվը նվազել է ավելի քան 80 տոկոսով, ինչին նպաստել է նաև նշված բարեփոխումը:

Անդրադարձ է կատարվել դատական վարույթների թվայնացման ընթացքին: Ներկայում վարչական գործերի գրեթե 80 տոկոսը և սնանկության գործերի շուրջ 64 տոկոսը գրանցվում են էլեկտրոնային եղանակով: Քաղաքացիական և վարչական գործերով ներդրվել են էլեկտրոնային հայցադիմումների ներկայացման և գործերի կառավարման համակարգեր: Միաժամանակ շեշտվել է, որ թվայնացումը պետք է ուղեկցվի դատավարական կանոնների վերանայմամբ և գործերի արդյունավետ կառավարմամբ: Այդ տրամաբանությամբ նախապատրաստվում են նաև փոփոխություններ՝ անհրաժեշտ երաշխիքների պահպանմամբ հեռավար դատական նիստերի կիրառությունն ընդլայնելու համար:

Ծառայությունների իրական օգտագործման կարևորությունը ներկայացվել է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի էլեկտրոնային գրանցման օրինակով: Չնայած 2025 թվականի դեկտեմբերին գործարկվել է նոր առցանց գրանցման համակարգ, 2026 թվականի առաջին վեց ամիսներին այդ եղանակով գրանցվել են անհատ ձեռնարկատերերի շուրջ 15 տոկոսը և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների շուրջ 13 տոկոսը: Ներկայացվել են նաև որոշ ծառայությունների համար առցանց գրանցումը պարտադիր դարձնելու ուղղությամբ նախապատրաստված օրենսդրական փոփոխությունները:

Առանձին անդրադարձ է կատարվել ընտանեկան որոշ վեճերով պարտադիր նախադատական հաշտարարության էլեկտրոնային հարթակին: Նշվել է, որ դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով, իսկ համապատասխան թվային միջոցներ չունեցող անձինք կարող են դիմել փաստաբանի կամ ներկայացուցչի միջոցով: Հարթակի միջոցով արդեն ներկայացվել է ավելի քան 1,700 դիմում, իսկ ավարտված գործերի շուրջ 28 տոկոսով ձեռք է բերվել հաշտություն: Այս փորձը ներկայացվել է որպես թվայնացման և արդարադատության մատչելիության համատեղ ապահովման օրինակ:

Քննարկման ընթացքում ընդգծվել է նաև դատավորների և դատական աշխատակազմի մասնակցության, նրանց հետադարձ կապի ու վերապատրաստման անհրաժեշտությունը: Անդրադարձ է կատարվել նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ ավելի քան 50 նոտարական ծառայությունների վերանայման և պարզեցման աշխատանքներին, ինչպես նաև արհեստական բանականության հնարավոր կիրառություններին՝ հին քաղաքացիական կացության գրառումների թվայնացման և քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Նշվել է, որ այդ ուղղությամբ անհրաժեշտ են որակյալ տվյալներ, փոխգործունակ համակարգեր և պատշաճ երաշխիքներ:

Ելույթի ընթացքում շեշտվել է, որ տարբեր նախաձեռնությունները պետք է դիտարկվեն միասնական բարեփոխումների շրջանակում: Կարևորվել է նաև միջազգային գործընկերների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի հետ մասնագիտական համագործակցությունը:

Գործուղման ընթացքում հնարավորություն է ստեղծվել միջազգային քննարկումներում ներկայացնելու Հայաստանում իրականացված բարեփոխումները, ծանոթանալու իրավական փոփոխությունների իրականացման և թվային ծառայությունների ներդրման վերաբերյալ այլ երկրների մոտեցումներին, ինչպես նաև քննարկելու Համաշխարհային բանկի խմբի կողմից տրամադրվող մասնագիտական աջակցության հնարավորությունները: Համաժողովի քննարկումներից հատկապես առանձնացվել են բարեփոխումների ազդեցությունը չափելի արդյունքներով գնահատելու, թվային գործիքները դատավարական և կազմակերպական փոփոխությունների հետ համադրելու և օգտվողների իրական կարիքները հաշվի առնելու մոտեցումները:

Ստորագրող

ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ

2714930743

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

2026-11-11 13:33:13 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ